

Անուաներն — սահմանգրիին վրայ. երկու — խոզին — ալ
որեւ շնեց իր — որին է — որին իբր չէր ինչու ընել:

Էջ 115: — “Ս. Լուսաւորի Արշակունիս
Բնակիչն — յիշարարննէրը” գլխուն համար:

1876 — Կենդրոնական Վարժարանի շինու-
թիւնը, որուն արձանագրութիւնը դրուած է Վար-
ժարանի մուտքի դրան երեք կտոր սպիտակ մարմարէ
Բարաւորին վրայ.

— “Ազգային Կեդրոնական Վարժարան / Կա-
ռուցեալ արդեամբ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյս
Ղալաթիոյ ի Հայրապետութեան ամենայն Հայոց /
Տ. Գեորգայ Գ. Կաթողիկոսի եւ ի Պատրիարքու-
թեան Կ. Պօլսոյ Տ. Ներսիսի Արքեպիսկոպոսի,
1876 / յ:

1878 — Կենդրոնական Վարժարանի մուտքի
դրան ձախ կողմը պատին վրայ, սպիտակ մարմար.

— “Ի նպաստ կառուցման / ազգ. կեդրոնա-
կան / վարժարանիս Ղալաթիոյ՝ մեծահաւատ Յա-
րութիւն Աղա Գափա / մաճեան յիւր կենդանու-
թեան նուիրեաց հինգ / հարիւր Օսմ. լիրայ, 1878
Ապրիլ 13 / յ:

1886. — Կենդրոնականի մուտքին մէջ, ձախ
կողմը՝ պատին վրայ, սպիտակ մարմար.

“Ի յիշատակ / Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի
Վարժապետեան / Ազգասէր Պատրիարքին Օսմա-
նեան Հայոց / որոյ ջանիւք եւ նախաձեռնութեամբ /
կատարեցաւ հանգանակութիւն / վասն բարձման
մնացորդի պարտուց / Ազգային կալուածոց Ղալա-
թիոյ / Ի բացումն Կեդրոնական Վարժարանիս / Ի
1 Սեպտեմբերի 1886 / ի Հայրապետութեան Ամե-
նայն Հայոց / Տ. Մակարայ Կաթողիկոսի / Եւ ի Պա-
տրիարքութեան Կոստանդնուպոլսոյ / Տ. Յարու-
թիւն Արքեպիսկոպոսի Վեհապետեան / յ:

Այս՝ պատուոյ յիշատակարանին ճիշդ գէմը,
այսինքն՝ Կենդրոնականի մուտքին մէջ՝ ալ կողմի